# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-ՀՈԱԿ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **07 սեպտեմբերի 2026թ.**

2026թ-ի սեպտեմբերի 03-07-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4, հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի էլեկտրական ապրանքների ձեռքբերման թիվ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-ՀՈԱԿ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Կ. Մովսիսյան՝ | «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի փականագործ, |
| Ա. Հակոբյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Թ. Աբգարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի **սեպտեմբերի** 03-ին, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 14:15-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | էլեկտրականության արկղեր | 8,541,240.00 | 04.09.2026 14:15 | 1,080,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ իրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, Հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26, +374 77 69 95 51 | h5r.gasparyan@yandex.com | 01096027 |
| 2 | «ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՍՊԸ | ք. Արարատ, Սուրբ Ամենափրկիչի 36, +374 94 22 32 55 | gnumner2024@mail.ru | 02840014 |
| 3 | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | ԱՐԱՐԱՏ, ՎԵԴԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., Տ 50, +374 41 46 44 44 | Karaxanyan90@mail.ru | 47874685 |

2026 թվականի սեպտեմբերի 04-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման ենթակա հայտեր առկա չեն:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 1,080,000.00 | 8,541,240.00 | 20% | 10,249,488.00 | 8,541,240.00 | 20% | 10,249,488.00 | Մերժված |
| | «ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՍՊԸ | | 200,000,005.00 | 20% | 240,000,006.00 | 200,000,005.00 | 20% | 240,000,006.00 | Մերժված |
| | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777,777,777.00 | 0% | 777,777,777.00 | 777,777,777.00 | 0% | 777,777,777.00 | Մերժված |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026 թվականի սեպտեմբերի 07-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատում չկատարել, հաշվի առնելով, որ համակարգի կողմից գնահատման մեջ հայտեր չեն ներառվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը, որի արդյունքում՝ համակարգը մերժել է մասնակիցներիի կողմից ներկայացված հայտերը:

2026 թվականի սեպտեմբերի 07-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը ներկայացրեց Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Հակոբյան ____________

Թ. Աբգարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________